ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ձեռներեցության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով, Նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարը (այսուհետ՝ Նախարար) Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

4. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են Վարչության պետը և Վարչության բաժինները:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5. Վարչության հիմնական նպատակներն են՝

1) Ձեռներեցության զարգացմանն ուղղված պետական քաղաքականության մշակումը և փաստացի արդյունքների գնահատումը՝ հիմնվելով ձեռնարկատիրական միջավայրի և միջազգային փորձի վերլուծության վրա.

2) Պետություն–մասնավոր երկխոսության ինստիտուցիոնալ ձևաչափերի ձևավորումն ու կայացումը, քաղաքականության արդյունավետ իրականացումը՝ ապահովելով ձեռնարկատիրական համայնքի ակտիվ մասնակցությունը քաղաքականությունների մշակման, իրականացման և գնահատման գործընթացներում.

3) Կանաչ և կայուն տնտեսությանն անցման խթանումը՝ ապահովելով կայուն արդյունավետությունը և շրջանաձև տնտեսության զարգացումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) Ձեռներեցության պետական քաղաքականության մշակումը, շարունակական զարգացումը և տնտեսության գերակայություններին համապատասխան իրականացումը.

2) Պետություն–մասնավոր երկխոսության հարթակների կատարելագործումը և շահագրգիռ կողմերի ներգրավվածության ընդլայնումը, ինչպես նաև քաղաքականության իրականացման արդյունավետության ապահովումը.

3) Կանաչ, կայուն և շրջանաձև տնտեսության շարունակական զարգացումը, կանաչ և կայուն տնտեսության շրջանակներում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչության գործառույթներն են՝

1) Ձեռներեցության զարգացմանն ուղղված պետական քաղաքականության մշակում.

2) Քաղաքականության արդյունավետության վերլուծություն և փաստացի արդյունքների գնահատում, շեղումների վերհանում.

3) Ձեռնարկատիրական միջավայրի վերլուծության իրականացում և արդյունքների հիման վրա ձեռներեցության զարգացման քաղաքականության բարելավման աշխատանքների իրականացում.

4) Սկսնակ ձեռներեցների աջակցության գործիքակազմի ընդլայնման, այդ թվում՝ հավելյալ արժեքի ստեղծման, ձեռներեցության սուբյեկտների կարողությունների զարգացման ուղղությամբ պետական քաղաքականության կանխորոշում.

5) Ձեռներեցության դիմակայունության բարձրացմանն ուղղված աջակցության գործիքակազմի մշակում ու իրականացում.

6) Ձեռներեցության զարգացմանն ու խթանմանը միտված թիրախային աջակցության ծրագրերի և վերջիններիս իրականացման ցուցանիշների մշակման աշխատանքների իրականացում.

7) Ձեռներեցության աջակցության ռազմավարական փաստաթղթերի (ծրագրեր, ռազմավարություններ, ճանապարհային քարտեզներ և այլ նախաձեռնություններ) մշակման, վերլուծության և իրականացում.

8) Պետություն–մասնավոր երկխոսության հարթակի կազմակերպում և համակարգում.

9) Թեմատիկ և ոլորտային քննարկումների և հանրային լսումների իրականացում.

10) Ձեռներեցության զարգացման քաղաքականության իրականացում, այդ թվում՝ հնարավոր շահառուների ընտրության աշխատանքների և արդյունքների գնահատման գործընթացների կազմակերպում.

11) Ձեռներեցության զարգացման քաղաքականության իրականացման գործընթացներում Նախարարության ներգրավվածությունն ապահովելու նպատակով գործընկեր կառույցների, մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն.

12) ՓՄՁ զարգացման խորհրդի քարտուղարության գործառույթների իրականացում՝ ներառյալ ոլորտի ուսումնասիրություն, զարգացման ուղղությունների և բարելավման լուծումների վերաբերյալ առաջարկությունների մշակում, պետական մարմիններից և մասնավոր հատվածից ստացված առաջարկությունների ամփոփում և վերլուծական աշխատանքներ.

13) Միջազգային համագործակցություն՝ ուղղված պետություն–մասնավոր երկխոսության ինստիտուցիոնալ մեխանիզմների կատարելագործմանը՝ տեխնիկական և խորհրդատվական աջակցության ներգրավմամբ.

14) Պետություն–մասնավոր երկխոսության ինստիտուցիոնալ մեխանիզմների կազմակերպման և համակարգման իրականացման աշխատանքներ՝ ապահովելով ձեռնարկատիրական համայնքի մասնակցությունը ձեռներեցության զարգացման պետական քաղաքականության մշակման, իրականացման և գնահատման գործընթացներին.

15) Կանաչ և կայուն տնտեսական զարգացման քաղաքականության մշակում և քաղաքականությամբ նախատեսված գործողությունների իրականացման աշխատանքների համակարգում.

16) Կանաչ, կայուն և շրջանաձև տնտեսության զարգացմանը նպաստող համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում և վերջիններիս շարունակական կատարելագործում.

17) Կանաչ բաղադրիչով և նորարարական լուծումներով ձեռնարկատիրական գործունեության կազմակերպմանը նպաստող օրենսդրական դաշտի մշակում.

18) Կանաչ, անցումային և նպաստող ծրագրերի և միջոցառումների տեսակների դասակարգման համակարգի (տաքսոնոմիայի) ներդրման համատեքստում անհրաժեշտ իրավակարգավորող դաշտի ձևավորում.

19) Կանաչ, կայուն և շրջանաձև տնտեսությանն առնչվող ոլորտային ռազմավարությունների ուսումնասիրության իրականացում և, ըստ անհրաժեշտության, ոլորտային քաղաքականության, ծրագրերի մշակման և ներդրումային նախաձեռնությունների խթանման ուղղությամբ շահագրգիռ գերատեսչությունների հետ համագործակցություն.

20) Իր իրավասությունների շրջանակում տնտեսավարող սուբյեկտներին կանաչ տնտեսությանն անցման և շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման գործընթացին աջակցության տրամադրում.

21) Կանաչ, կայուն և շրջանաձև տնտեսության շարունակական զարգացմանը միտված գիտելիքի փոխանակման, միջազգային չափանիշների հնարավոր տեղայնացման և լավագույն փորձի ներդրման աշխատանքների իրականացում.

22) Կանաչ և կայուն տնտեսական զարգացման ապահովմանը միտված կարողությունների զարգացման միջոցառումների, ուսուցման և վերապատրաստման դասընթացների և իրազեկման աշխատանքների կազմակերպում.

23) Ձեռներեցության զարգացմանը, պետություն-մասնավոր երկխոսությանը և քաղաքականության իրականացմանը, ինչպես նաև կանաչ և կայուն տնտեսությանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով Վարչությանը վերապահված այլ գործառույթների իրականացում.

24) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելով՝ Վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի նախապատրաստում:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) Քաղաքականության և ծրագրերի բաժին.
2) Պետություն–մասնավոր երկխոսության բաժին.
3) Կանաչ և կայուն տնտեսության զարգացման բաժին:

6. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Քաղաքականության և ծրագրերի բաժնի գործառույթներն են.

1) Ձեռներեցության զարգացմանն ուղղված պետական քաղաքականության մշակում.

2) Քաղաքականության արդյունավետության վերլուծություն և փաստացի արդյունքների գնահատում, շեղումների վերհանում.

3) Ձեռնարկատիրական միջավայրի վերլուծության իրականացում և արդյունքների հիման վրա ձեռներեցության զարգացման քաղաքականության բարելավման աշխատանքների իրականացում.

4) Սկսնակ ձեռներեցների աջակցության գործիքակազմի ընդլայնման, այդ թվում՝ հավելյալ արժեքի ստեղծման, ձեռներեցության սուբյեկտների կարողությունների զարգացման ուղղությամբ պետական քաղաքականության կանխորոշում.

5) Ձեռներեցության դիմակայունության բարձրացմանն ուղղված աջակցության գործիքակազմի մշակում ու իրականացում.

6) Ձեռներեցության զարգացմանն ու խթանմանը միտված թիրախային աջակցության ծրագրերի և վերջիններիս իրականացման ցուցանիշների մշակման աշխատանքների իրականացում.

7) Ձեռներեցության աջակցության ռազմավարական փաստաթղթերի (ծրագրեր, ռազմավարություններ, ճանապարհային քարտեզներ և այլ նախաձեռնություններ) մշակման, վերլուծության և իրականացման համակարգում.

8) Ձեռներեցության զարգացմանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթների իրականացում.

9) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելով՝ Բաժնի գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի նախապատրաստում:

10. Պետություն–մասնավոր երկխոսության բաժնի գործառույթներն են.

1) Պետություն–մասնավոր երկխոսության հարթակի կազմակերպում և համակարգում.

2) Թեմատիկ և ոլորտային քննարկումների և հանրային լսումների իրականացում.

3) Ձեռներեցության զարգացման քաղաքականության իրականացման, այդ թվում՝ հնարավոր շահառուների ընտրության աշխատանքները և արդյունքների գնահատման գործընթացների կազմակերպում.

4) Ձեռներեցության զարգացման քաղաքականության իրականացման գործընթացներում Նախարարության ներգրավվածությունն ապահովելու նպատակով գործընկեր կառույցների, մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն.

5) ՓՄՁ զարգացման խորհրդի քարտուղարության գործառույթների իրականացում՝ ներառյալ ոլորտի ուսումնասիրությունը, զարգացման ուղղությունների և բարելավման լուծումների վերաբերյալ առաջարկությունների մշակումը, պետական մարմիններից և մասնավոր հատվածից ստացված առաջարկությունների ամփոփումն ու վերլուծությունը.

6) Միջազգային համագործակցություն՝ ուղղված պետություն–մասնավոր երկխոսության ինստիտուցիոնալ մեխանիզմների կատարելագործմանը՝ տեխնիկական և խորհրդատվական աջակցության ներգրավմամբ.

7) Պետություն–մասնավոր երկխոսության ինստիտուցիոնալ մեխանիզմների կազմակերպման և համակարգման իրականացում՝ ապահովելով ձեռնարկատիրական համայնքի մասնակցությունը ձեռներեցության զարգացման պետական քաղաքականության մշակման, իրականացման և գնահատման գործընթացներին.

8) Պետություն-մասնավոր երկխոսության և քաղաքականության իրականացմանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթների իրականացում.

9) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելով՝ Բաժնի գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի նախապատրաստում:

11. Կանաչ և կայուն տնտեսության զարգացման բաժնի հիմնական գործառույթներն են՝

1) Կանաչ և կայուն տնտեսական զարգացման քաղաքականության մշակում և քաղաքականությամբ նախատեսված գործողությունների իրականացման աշխատանքների համակարգում.

2) Կանաչ, կայուն և շրջանաձև տնտեսության զարգացմանը նպաստող համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում և վերջիններիս շարունակական կատարելագործման ապահովում.

3) Կանաչ բաղադրիչով և նորարարական լուծումներով ձեռնարկատիրական գործունեության կազմակերպմանը նպաստող օրենսդրական դաշտի մշակում.

4) Կանաչ, անցումային և նպաստող ծրագրերի և միջոցառումների տեսակների դասակարգման համակարգի (տաքսոնոմիայի) ներդրման համատեքստում անհրաժեշտ իրավակարգավորող դաշտի ձևավորման շրջանակի մշակում.

5) Կանաչ, կայուն և շրջանաձև տնտեսությանն առնչվող ոլորտային ռազմավարությունների ուսումնասիրության իրականացում և, ըստ անհրաժեշտության, ոլորտային քաղաքականության, ծրագրերի մշակման և ներդրումային նախաձեռնությունների խթանման ուղղությամբ շահագրգիռ գերատեսչությունների հետ համագործակցություն.

6) Կանաչ, կայուն և շրջանաձև տնտեսության շարունակական զարգացմանը միտված գիտելիքի փոխանակման, միջազգային չափանիշների հնարավոր տեղայնացման և լավագույն փորձի ներդրման աշխատանքների իրականացում.

7) Կանաչ և կայուն տնտեսական զարգացման ապահովմանը միտված կարողությունների զարգացման միջոցառումների, ուսուցման և վերապատրաստման դասընթացների և իրազեկման աշխատանքների կազմակերպում.

8) Իր իրավասությունների շրջանակում տնտեսավարող սուբյեկտներին կանաչ տնտեսությանն անցման և շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման գործընթացին աջակցության տրամադրում

9) Կանաչ և կայուն տնտեսությանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթների իրականացում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելով՝ Բաժնի գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի նախապատրաստում:

7. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Վարչության պետը:

13. Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Նախարարին:

14. Վարչության բաժինները ղեկավարում են բաժինների պետերը:

15. Բաժինների պետերն անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության պետին:

16. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության բաժինների պետերից մեկը՝ Վարչության պետի ներկայացմամբ:

17. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

18. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

19. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:»